





երկու շաբթով տեղադրուած յատակագծում խաչածեւ չորս մոյթեր: Դրանցով կազմուած երկու կողային նաւերը 2 մ, իսկ միջին նաւը 5 մ լայնութիւն ունեն: Մոյթերի հանդիպակաց պատերին կան որմնամոյթեր, որոնք, ինչպէս եւ մոյթերը, բարձրանում են երկաւոր խարխախների վրայ:

Եկեղեցու դիրքը, երեք զոյգ մոյթերի, գետնախարխի եւ խաչաքանդակների առկայութիւնը նկատի ունենալով՝ մենք 1987-ին առաջ ենք քաշել բազիլիկ կառոյցի՝ Արուճի հին բազիլիկ եկեղեցին եղած լինելու տեսակէտը<sup>9</sup>: Խորանի բացակայութիւնը բացատրուած է հետաքայում արեւելեան կողմից չէնք կրճատմամբ:

2006 թ. ՀՀ Յուշարձանների պահպանութեան գործակալութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցան բազիլիկ կառոյցի շրջակայքի մաքրման աշխատանքներ, որոնք վերածուեցին պեղումների (ղեկավար՝ Գագիկ Մ. Սարգսեան): Դրանց արդիւնքում լիովին հաստատուեց, որ շինութիւնը նախկինում եղել է բազիլիկ եկեղեցի: Կառոյցի արեւելեան բուրգերի միջին հողը դուրս բերելուց յետոյ պարզուեց, որ այստեղ ոչ միայն շարունակուած է երկայնական պատերի գետնախարխը, այլեւ արեւելեան պատը կառուցուած է նախնական կառոյցի սալայատակի վրայ: Այսինքն, միանշանակ պարզ դարձաւ, որ շինութիւնը եղել է եռանաւ բազիլիկ, որն արեւելեան կողմից կրճատուել է եւ մոյթերի երբորդ զոյգը մնացել

է արեւելեան պատի մէջ: Կառոյցն ունեցել է արտաքինից բազմանիստ խորան, ինչպէս Դ.-Ե. դդ. եկեղեցիներից շատերը (զծ. 3): Հիւսիսակողմեան բուրգի մէջ գտնուել է խորանի արտաքին պատի երկնիստ քարերից մէկը<sup>10</sup>: Խորանի տակ ժայռը փորուած է խորանի կիսաշրջանին համապատասխան: Պեղումներից յայտնաբերուեցին նաեւ պատուհանների պսակների եւ քիւերի՝ հնագոյն եկեղեցիներին յատուկ օղակածեւ դարդաշարով յարդարուած բազմաթիւ քարեր:

Այն, որ Արուճն ունեցել է եկեղեցի մինչեւ Գրիգոր Մամիկոնեանի պատուերով կաթողիկէի կառուցումը, ուսումնասիրողներին յայտնի էր: Սրա անուղղակի հաստատումը պահպանուել է «Գիրք թղթոցում», որտեղ Աբրահամ Ա. կաթողիկոսի՝ 609 թ. հրաւիրած Դուինի երրորդ եկեղեցական ժողովի մասնակիցների թուում նշուում է Արուճից եկած երէց Գրիգորիսը՝ «...Միքայէլ Աղցից, Գրիգորիս Արճոյ... եւ այլ վանից երիցամբ հանդերձ եկեալ...»<sup>11</sup>:

<sup>10</sup> Պեղումների արդիւնքների մասին հանգամանալից հրատարակմամբ հանդէս է եկել Գ. Մ. Սարգսեանը: Ըստ նրա՝ Արուճի բազիլիկ եկեղեցին կառուցուած է եղել հեթանոսական տաճարի տեղում, այնուհետեւ վերակառուցուել է երեք անգամ: Առաջին վերակառուցմամբ դարձել է քրիստոնէական տաճար (Դ. դ.), երկրորդ վերակառուցումը եղել է Գրիգոր Մամիկոնեանի կողմից մեծ տաճարի եւ պալատի կառուցումից յետոյ, երբ արդէն խարխուղուած բազիլիկը արեւելեան կողմից կրճատուել է մոյթերի երրորդ զոյգի հատուածից եւ վերածուել պալատի սրահի (Լ. դ. 60-70-ական թթ.), երրորդ վերակառուցմամբ ԺԵ.-ԺԶ. դդ. համալրուել է նոր հաստ պատերով ու բուրգերով եւ դարձել ամբողջ տե՛ս Գ. Սարգսեան, *Արուճի բազիլիկի հնագիտական հետազոտությունը*, «Հայ արուեստ», 2007, թիւ 1, էջ 34-37:

<sup>11</sup> Գիրք թղթոցի 1901 թ. հրատարակութեան մէջ արուճեցի երէցի անունը սխալմամբ տպուած է Գիրգորիս (Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 151-152), որտեղից էլ այն անցել է տարբեր հրատարակություններ: Ընդուն Գրիգորիսն է: Տե՛ս Գիրք թղթոց, Երուսաղէմ, 1994, էջ 299, հմմտ.

<sup>9</sup> Կ. Մաթեոսեան, *Արուճ*, էջ 68-70: Այս տեսակէտն ընդունել է նաեւ Արեգ Հասարթեանը. տե՛ս Ա. Հասարթեան, *Արուճի վաղ միջնադարեան ճարտարապետական համալիրը*, թեկնածուական ատենախօսութեան սեղմագիր, Երեւան, 2004, էջ 19: Ակադեմիկոս վարազդատ Յարութիւնեանը չի ընդունել այս տեսակէտը. տե՛ս Վ. Յարութիւնեան, *Հայկական ճարտարապետութեան պատմություն*, Երեւան, 1992, էջ 170, տե՛ս նաեւ *Հայկական ճարտարապետութեան պատմություն*, հտ. 2, Եր., 2002, էջ 64-71:

Արուճում համաժամանակ կառուցուած կաթողիկէն եւ բուն պալատը տեղադրուած են զուգահեռաբար: Յուշարձանախմբի յատակագծից երեւում է, որ երկուսն էլ կառուցուել են նոյն նախագծող ճարտարապետի մտայղացմամբ եւ պալատի դիրքը թելադրուել է եկեղեցու տեղադրութեամբ: Մինչդեռ բազիլիկը յիշեալ շինութիւնների նկատմամբ փոքր-ինչ շեղադիր է: Վերջինիս հիւսիսարեւելեան կողմում պահպանուել է մի աւերակ մատուռ եւ վաղ քրիստոնէական շրջանի՝ յուշասեան ստիլբատ: Յատակագծից երեւում է, որ բազիլիկ եկեղեցին, մատուռը եւ յուշասեան ստիլբատը տեղադրուած են զուգահեռաբար: Դրանք բոլորն էլ կառուցման ժամանակով մօտ են իրար՝ ստեղծուած կաթողիկէից եւ պալատից աւելի վաղ:

2006 թ. պեղումների ժամանակ գտնուել է յուշասեան վերնամասի խոյակը: Այն վերին մասում ունի փոսիկ, որի մէջ ժամանակին դրուած է եղել թեւաւոր խաչի հիմնաթեւը: Խոյակի կողմերին գարդապատկերներ են, շրջանագծի մէջ պատկերուած հաւասարաթեւ խաչ, իսկ առաւել կերուած հաւասարաթեւ խաչ, իսկ առաւել հետաքրքրականը թեւատարած մարդկային կերպարն է (նման է Դանիէլի կերպարին, որ պատկերուած էր «Դանիէլը առիւծների գբում» յօրինուածքում): Հաւանանք է, որ պատկերազարկան, իմաստային կապ է ունեցել բուն քառակող կոթողի վրայ եղած քանդակապատկերների հետ<sup>12</sup>:

Արուճի Բազիլիկ եկեղեցու մի քանդակազարդ խոյակ ժամանակին էջմիածին է կազարդ Գարեգին Յովսէփեանը<sup>13</sup> (1930-ատարել Գարեգին Յովսէփեանը)

կան թթ. խոյակը տարուել է Հայաստանի պատմութեան պետական թանգարան): Երկու կողմից մշակուած սոյն խոյակը հաւանորէն տեղադրուած է եղել խորանի հարանային կողմի վերին անկիւնամասում՝ խաչաքանդակի՝ դէպի եկեղեցու սրահի կողմը նայող դիրքով<sup>14</sup>: Թէ՛ այս, թէ՛ յուշակոթողի խոյակի քանդակներն ու շրջանագծի մէջ առնուած հաւասարաթեւ խաչերը, նաեւ բազիլիկի հիւսիսային պատի նմանատիպ զոյգ խաչերը, ակնհերեւորէն Դ.-Ե. դարերի քանդակազարդման ոճն ունեն:

Արուճում 2006 թ. պեղումները հաստատեցին, որ նախկինում պալատի մաս համարուած բազիլիկ կառոյցը իրականում բնակավայրի Դ.-Ե. դարերի բազիլիկ եկեղեցին է, որը, վերակառուցման ենթարդուելով հաւանաբար է. դ. երկրորդ կէսին, կուելով հաւանաբար կողմից, իսկ աւելորճատուել է արեւելեան կողմից, իսկ աւելի ուշ (թերեւս ԺԳ.-ԺԷ. դարերում) վեր է ավելու փոքր ամրոցի: Այժմ այն այցելուներին է ներկայանում վերակառուցման մի քանի շերտերը ցուցադրող տեսքով:

Բուն բազիլիկի ճարտարապետութեան վերաբերեալ պէտք է աւելացնել, որ այն սովորականից շեղուող կոնստրուկտիւ երկու մանրամասն ունի. առաջինն այն է, որ արեւմտեան մուտքը կառոյցի առանցքից արեւմտեան մուտքը կառոյցի առանցքից փոքր-ինչ հարաւ է, երկրորդը՝ որ արեւելեան երկու զոյգ մոյթերն աւելի մօտ են իրար, քան մոյթերի արեւմտեան զոյգը: Սրա բացատրութիւնը որոնումը ճարտարապետ

<sup>12</sup> Ուխտանէս եպիսկոպոսի Պատմություն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 64:

<sup>13</sup> Կ. Մաթեոսեան, *Պատմամշակութային նորաբաց էջեր*, «Հայ արուեստ», 2006, թիւ 4, էջ 34-35:

<sup>14</sup> Այդ մասին Գ. Յովսէփեանը գրում է. «Արուճում եւս եղել է մի բազիլիկ շէնք, աւելի հին, քան Գրիգոր Մամիկոնեանի շինած երկարածից մեծ տաճարը 668 թ., որի մի խոյակը Գասախի կամ

Տեկորի ձեւով եւ քանդակով, բերել ենք Լէ-միաճնի թանգարանը», տե՛ս Գ. Յովսէփեան, *Միջին դարի արուեստը*, հտ. Բ, Երեւան, 1987, էջ 130: *Սի պատմություն*, հտ. Բ, Երեւան, 1987, էջ 130: խոյակի երկու լուսանկար տպագրուած է Յ. Ստրիգովսկու հայ ճարտարապետութեանը նուիրուած գրքում (J. Strzygowski, *Die Baukunst der Armenier und Europa*, Wien, 1918, 439, 440):

<sup>14</sup> Օրջանագծի մէջ առնուած հաւասարաթեւ խաչերի քանդակապատկերով նման խոյակներ կան նաեւ Արուճից ոչ հեռու՝ Արագածի լանջին գտնուող Աւանի Դ.-Ե. դարի միանաւ բազիլիկի խորանի երկու կողային անկիւններում:

մասնագետներին թողնելով՝ կարող ենք միայն ենթադրել, որ թերեւս նաեւ այս կառուցողական մասնակի թերութիւնները նկատի ունենալով է, որ Արուծի բարձր արուեստով ստեղծուած Կաթողիկէի եւ պալատի փառահեղ կառույցների ստեղծումից յետոյ որոշուել է Հին բազիլիկն այլեւս չօգտագործել որպէս եկեղեցի, այլ այն, արեւելեան կողմից կրճատելով, դարձնել այլ նպատակների ծառայող սրահ:

Պեղումների ժամանակ Արուծի բազիլիկի մօտ յայտնաբերուած վաղմիջնադարեան յուշասան խոյակը նոյնպէս մեծ արժէք է ներկայացնում: Պատմութեան թանգարանում պահուող խոյակի Հետ միասին նրանք մեզ պատկերացում են տալիս ճարտարապետական համալիրի այս հատուածի գեղարուեստական յարդարանքի Հնաւանդ եւ միասնական ոճի մասին:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Դ. Ե. դարերի հայ ճարտարապետութեանը եւ մասնաւորապէս՝ բազիլիկ եկեղեցիներին անդրադարձողներն այսուհետեւ պէտք է նկատի ունենան նաեւ Արուծի եռանաւ բազիլիկը:

Աւելացնենք, որ Արուծի յուշարձանախմբի յատկազօրը մինչեւ այժմ եղած հրատարակութիւններում ամբողջական չէ: Այստեղ ներկայացուած յատկազօրում (գծ. 1) աւելացուած են Կաթողիկէի հարաւային պատակից, հաւանաբար՝ Ժ.-ԺԱ. դդ. կառուցուած փոքր մատուռը, որի հիմնաքարերն են պահպանուել (2), Կաթողիկէի հարաւարեւելեան անկեան մօտ գտնուող յուշասան ստիլոբատի բաւական մեծ հիմքը (3): Նշենք նաեւ, որ պալատի մուտքի տեղը 1950-ականների պեղումների ժամանակ չի որոշուել, քանի որ զարմանալիօրէն ուշադրութիւնից դուրս է մնացել կենտրոնական սրահի արեւելեան չորս սիւների կենտրոնում գտնուող տուֆից պատրաստուած հսկայ ուղղանկյուն քարը (2,30x1,65x0,40 մ): Դրա վերին հար-


թութեան վրայ արուած է դարձեալ ուղղանկյունաձեւ փոսորակ (1,40x0,85 մ): Այս խոշոր տափարակ քարը իշխանական գահաւորակի պատուանդանն է (5): Նրա դիրքը յուշում է, որ գահասրահի մուտքը եղել է հանդիպակաց կողմից (6)՝ Կաթողիկէ եկեղեցու արեւմտեան պատի եզրագծի շարունակութեամբ կառուցուած պալատի արեւմտեան պատի վրայ: Այս մասում, ցաւօք, պեղումները չեն շարունակուել, բայց մեծ է հաւանականութիւնը, որ ընդամենը մի քանի մետր դէպի արեւմուտք հողի շերտը մաքրելուց յետոյ կը բացուի պալատի արեւմտեան պատը եւ գահասրահի մուտքի հատուածը:

Վերջում նշենք, որ չնայած Արուծի յուշարձանախմբի ունեցած բացառիկ պատմամշակութային արժէքին, այն առայժմ պատշաճ հոգատարութեան եւ պահպանութեան չի արժանանում<sup>15</sup>:


Մինչդեռ Արուծի հնավայրը ոչ միայն գիտական առումով է ուշագրաւ, այլեւ գրաւիչ է զբօսաշրջութեան տեսակէտից՝ ճանապարհային շահեկան գիւղքի եւ տարբեր դարաշրջանների պատկանող բազմազան յուշարձանների առկայութեան շնորհիւ:

15 Արուծի յուշարձանների պահպանութեան ներկայ վիճակը մտահոգիչ է: Խնամուած վիճակում է միայն Կաթողիկէն, իսկ յարակից պալատական համալիրի եւ բազիլիկ եկեղեցու տարածքը մաքրման, այցելուների համար արահետների պատրաստման կարիք ունի: Ծատ աւելի անմխիթար վիճակում է բերդը, որի է. դարի պարիսպները 1980-ական թուականներին պեղուել, բացուել են միջնա դարերը, իսկ այժմ քանդուում են: Արուծի գիւղամիջում գտնուող ԺԹ. դարի եկեղեցին, որը խորհրդային շրջանում, «կոլխոզի պահեստ» լինելով, կանգուն էր, այժմ, «յուշարձանի» կարգավիճակ ստանալով, փլատակի է վերածուել:


ԳՏԱԳՐԵՐ



Գծ. 1. Արուծի յուշարձանախումբը  
1. Կաթողիկէ եկեղեցի, 2. Մատուռ, 3. Յուշակոթողի ստիլոբատ, 4. Գրիգոր Մամիկոնեանի պալատը, 5. Գահատրակի պատուանդանը, 6. Գահասրահի ենթադրեալ մուտքը, 7. Յուշակոթողի ստիլոբատ, 8. Մատուռ, 9. Բազիլիկի խորանի վերակազմուած մասը, 10. Բազիլիկի խորանի վերակազմուած մասը



Գծ. 2. Արուծի՝ ամրոցի վերածուած բազիլիկը (հեղ. Գ. Մ. Սարգսեան):



Գծ. 3. Արուծի հնագոյն բազիլիկ եկեղեցու վերակազմութիւնը (հեղ. Գ. Մ. Սարգսեան):

ԼՈՒՄԱՆԿԱՐՆԵՐ




Նկ. 1. Արուճի բազիլիկ եկեղեցին և Կաթողիկէն:



Նկ. 3. Բազիլիկի հիւսիսային պատի խաչաքանդակը:



Նկ. 2. Բազիլիկի խորանի ժայռափոր հիմքը:



Նկ. 4. Բազիլիկի խոյակ (լսնկ. Յ. Ստրժի-գովսկու գրքից):



Նկ. 5. Բազիլիկի մօտ գտնուող յուշատախտակ:

«ԿԻՐԱՌԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ». ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՄԵԹՈԴ-ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՏԱԾԱՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄԵԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Նազենի Ղարիբեան

Հայ միջնադարեան մշակոյթում եկեղեցական ճարտարապետութիւնը համարուում է ամենածաւալուն և ամենաբեղուն ուսումնասիրութեան ոլորտը, և սա ոչ միայն պահպանուած յուշարձանների ուրակով և քանակով, այլև՝ դրանց տիպաբանական մտայնացման և գեղարուեստական կերպարի իւրայատուկ և յարաբերականորէն անկախ բնոյթով: Գրեթէ մէկուկէս հարիւրամեակի ընթացքում Հնագիտական և արուեստաբանական ուսումնասիրութիւններն այս թեմայով հարուստ ու բազմակողմանի հրապարակումներ են լոյս ընծայել, որտեղ Հանգամանորէն ներկայացուած են յատակագծեր, նկարագրութիւններ, ռճական և տիպաբանական վերլուծութիւններ, ինչպէս նաև՝ տարբեր տեսութիւններ և դասակարգման փորձեր՝ ըստ յուշարձանների ծագումնային ու տիպական տուեալների:

Այնուամենայնիւ, հսկայածաւալ այս նիւթի ընդհանուր ծանօթութիւնն իսկ նկատելի է դարձնում, որ բազմաթիւ էական հարցեր կամ կարեւոր կէտեր դեռևս մնում են անլուծելի կամ առկախուած՝ պատմական և Հնագիտական բաւարար տուեալների սակաւութեան կամ բացակայութեան պատճառով, կամ էլ յուշարձանների որոշ խմբերի թուազրութեան և տիպական ծագման հարցում համամիտ ընդունուած կարծիքի բացակայութեան պատճառով, յատկապէս երբ խօսքը վերաբերում է վաղ քրիստոնէական Դ.-է. դդ. յուշարձաններին, ինչպէս նաև գմբէթի, գմբէթաւոր եկեղեցիների ծագմանը վերաբերող բանավէճին, որոնք կարեւոր են համարուում Հայ ճար-

տարապետութեան զարգացման խնդրի տեսանկիւնից:

Մեր կարծիքով՝ այսպիսի հարցերը շարունակում են մնալ «բաց» նաև այն պատճառով, որ դասական աւանդական մեթոդները, ինչպիսիք են պատմագիտականը, բանասիրականը, Հնագիտականը կամ արուեստաբանականը, նոյնիսկ հակամ արուեստաբանականը, զէպքում, մատեղ և զուգահեռ կիրառման դէպքում, չափ յաճախ սահմանափակ Հնարաւորութիւններ և, ըստ այդմ, սահմանափակ արթիւններ և, ըստ այդմ, սահմանափակ արթիւնաւէտութիւն ունեն: Ահա թէ ինչու, դիւնաւէտութիւն ունեն: Ահա թէ ինչու, մենք փորձեցինք մշակել և առաջադրել արուեստի պատմութեան ոլորտում նոր լրացուցիչ մի մեթոդ՝ այն պայմանականօրէն անուանելով «կիրառական եկեղեցաբանութիւն»<sup>1</sup>:

«Կիրառական եկեղեցաբանութիւնը» նպատակ ունի գիտական հիմքի վրայ ցուցանել և հիմնաւորել, որ գոյութիւն ունի սերտ ու անմիջական կապ եկեղեցու աստուածաբանական սահմանումների կամ բանաձևերի և պաշտամունքային կառոյցների հիմքում ընկած տիպաբանական

1 Այս մեթոդը, որպէս դոկտորական ատենախօսութիւն, ներկայացուել է պաշտպանութեան Փարիզում՝ Սորբոնի Ecole pratiques des hautes études հաստատութեան Պատմաբանասիրական etudes հաստատութեան Պատմաբանասիրական etudes հաստատութեան 23-իմ՝ «Art et theologie en Arménie du IVe au VIIe siècle: methode pour l'etude de l'eglise comme Temple chrétien» վերնագրով, պաշտպանութեան հրատարակութիւնը 2009 թ. (Garibian de Vartavan N., La Jérusalem Nouvelle et les premiers sanctuaires chrétiens de l'Arménie: methode pour l'etude de l'eglise comme Temple de Dieu, Isis Pharia, (Switzerland) and ZodiacBooks (USA)).